

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ Ս. ԱԹՈՒՈՅՍ ՏԵՂԱՊԱՀԻՆ

Յորգանան գտնուող Ս. Աթոռոյ քանինիդ Միաբաններէ տասնինից եղբայրներու կողմէն գիժմու կատարուեցաւ Ս. Քաղաքիս վաճառականութիւնը, խնդրելով որ Գեր. Տ. Եղիշէ Սրբազանի իբրեւ. օրինաւոր Տեղապարս կրկին վերանստատուի Տեղապարսական իր պաշտօնին մէջ:

2 Յունիս 1960, առաւօտեան ժամը 11ին, Քաղաքիս և Ս. Տեղեաց վաճառականութիւնը Հասան էլ Քաթիպ, հետը աւանդելով Երուսաղէմի և շրջակայից Ընդհ. Ռաւոյականութեան Իսլամական Պէշ Գրեյշան, Երուսաղէմի շրջանի ընդհ. վիճակաւ պետի օգնական Ալի Պէշ, և Քաղաքապետարանի ներկայացուցիչ Ծօթ. Մաժաժ, Պատրիարքարան եկան և հոն հաւաքուած ամբողջ Միաբանութեան անդամներու ներկայութեան Մուհաֆըզը իր Տեղապարսի պաշտօնին մէջ վերահաստատեց Գեր. Տ. Եղիշէ Եպս. Տէրտէրեանը: Ամբողջ Միաբանութիւնը յօժարութեամբ և սիրով ընդունեց այս հաստատումը և շնորհաւորեց զինքը:

Միաբանութիւնէ և Կառավարութիւնէ վերահաստատուած Գեր. Տեղապարս Տ. Եղիշէ Եպսիսկոպոս Տէրտէրեան, յաջորդ օրն իսկ, Միաբանական Ընդհանուր Ժողովի նախնիք Յորգանան գտնուող Միաբանութեան քանինիթ անդամներէ, քանինիթը, ընտրելու համար Ս. Աթոռոյ Տնօրէն Ժողովը, ներկայութեամբ և մասնակցութեամբ քանինիթ Ժողովական հայերբու:

Տնօրէն Ժողովոյ ընտրելեաց կրկնանուն ցանկին անցնելէ առաջ, ընտրուեցաւ Միաբանական Ընդհ. Ժողովոյ զիւանրս Գաղտնիքուէն Միաբանութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ Ատենապետ ընտրուեցաւ Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան, իսկ Փոխ Ատենապետ՝ Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան: Ա. և Բ. Ատենապարիներ Ֆիաշին Տ. Դաւիթ և Տ. Արիս Արեւելաները:

Հոս մասնաւոր յիշատակութեան արժանի կը նկատենք Նշել որ Գեր. Տ. Եղիշէ Եպս. Տէրտէրեան, ի յարգանս Նորին Ս. Սննդութեան, իբրեւ. պատժուած, չուրեց նախագահել Միաբանական Ընդհ. Ժողովի նիստերուն և խորհրդէ շայրիկ Սրբազանիէ որ փոխարինէ զինքը և բանալ Ժողովը նախագահական անթուէն: Տեղապարսի այս մէտքը խլացուցիչ ծափահարութեամբ արժանացաւ Միաբանական Ընդհ. Ժողովի բոլոր անդամներու կողմէ:

Ապա Միաբանական Ընդհ. Ժողովը անցաւ իր օրակարգին, որ էր ընտրութիւն Պատ. Տնօրէն Ժողովոյ վեց անդամներու, կրկնանուն ցանկին վրայէն, որ առաւ հետեւեւ արդիւնքը. —

Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան
Հոգ. Տ. Անուստան Վրդ. Ջոզանեան
Հոգ. Տ. Նեհոնի Վրդ. Բապուճեան
Հոգ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր
Հոգ. Տ. Դաւիթ Արդ. Սահակեան
Հոգ. Տ. Օնան Արդ. Գալպադեան

որոնք ընտրուելէ յետոյ ընդունեցին նախագահող Գեր. Տ. Հայրիկ Սրբազանի օրհնութիւնը:

Յունիս 6, 1960 ին, Նորինի Պատ. Տնօրէն Ժողովը, Միաբանական Ընդհ. Ժողովին պատահաբանեալ տեղեկագրով մը առաջարկ քուէն որ Միաբանութեան արտաքստին այն Միաբանները, որոնք պատահաւ եղան Երուսաղէմի վանքի տագնապին, իրենց հակականոնական և հակակառավարական գործունէութեամբ Միաբանութեան ներս և Հայ Ժողովուրդի մէջ ստեղծելով այն ցաւալի վիճակը, որուն հանդիսատեսներն ենք տակաւին:

Միաբանական Ընդհ. Ժողովը նկատի առնելով Պատ. Տնօրէն Ժողովոյ առաջարկը, բանաւոր գտաւ զայն և յետ թեր ու զէմ երկար վիճարանութեանց, լուսնեւրու բացարձակ առաւելութեամբ որոշեց արտաքսել զանոնք:

Ան Պատ. Տնօրէն Ժողովոյ պատահաբանեալ առաջարկը վերոյիշեալներու մասին և անոնց բոլորին՝ անունները. —

4 Յունիս 1960

Գերապատիւ

Տ. Եղիշէ Ս. Եպս. Տէրտէրեան
Պատրիարքական Տեղապարս և
Նախագահ Միաբանական Ընդհ. Ժողովոյ
Ս. Երուսաղէմ

Սրբազան Հայր,

Տնօրէն Ժողովոյ, 4 Յունիսի իր նիստին մէջ նկատի առնելով Ս. Աթոռոյ աշխուկացութիւնը, ստիպողական նկատեց զայն իր օրինաւոր, կանոնական և արդար վիճակին վերադարձնելու գործը: Այս առթիւ քննութեան առաւ պարագան այն Միաբաններուն, որոնք ստեղծեցին վերջին չորս տարիներու տագնապը և խախտեցին կարգն ու կանոնը թէ Միաբանութեան և թէ Ժողովուրդի կեանքին ներս, ինչպէս նաեւ աղարտեցին Ս. Աթոռոյ բարի համարքը յայս ն. վեհ. Թագաւորի յարգոյ Կառավարութեան:

Ժողովոյ ցաւով անբարգաւաճ հիմնական երեւ իրողութիւններու, որոնք աղիտալի հետեւեւները եղան երկար այս տագնապին:

Ա. — Կարգ մը Միաբաններ, լքելով արտա-

առանձինքն է Ս. Էջմիածնի մէջ իրենց վատանաւորած դաշտոնները, եկան Ս. Աթոռ և Միաբանութեան մէկ մասը, վաճաքանակ ժողովուրդին ու աշակերտութիւնը մղեցին ապստամբութեան, օրինաւոր իշխանութեան դէմ, խախտելով անոնց բոլորի հոգիին մէջ, դարերէն աւանդ. մնացած յարգանքը իշխանութեան և Աթոռին հանդէպ:

Բ. — Նոյն Միաբանները, իրենց հետեւորդներու միջոցաւ, ճշշում է մինչև իսկ բիրտ ոյժ գործածեցին, Միաբանութեան անդամները ապրելէ կերպով գոտարուած ժողովներու բերորէ համար, ինքզինքնին Պատրիարք և Լուսաւորապետ րնտրել և յայտարարել տալու նպատակով: Սոյն արարքներով անոնք ռուսակոյնցին Միաբանական կանոնն ու աւանդութիւնը, տապալելով օրինաւոր իշխանութիւնը և անոր տեղ հաստատել ուղղով ապրելէ կերպով բնութաւած իշխանութիւն մը:

Գ. — Երբ Յորգանանի Կառավարութիւնը, իստ երկուքն լինեալ, հաստատեց եղած բռնկորաւաններու ոչ միայն ապրելէ այլև երկրի անդորրութեան տեսակետով վատագւար ըլլալը, հրահանգեց վերադարձնել վանքի կցութիւնը իր կանոնական և իրաւական նախկին վիճակին: Բռնագրաւիչ Միաբանները, փոխանակ ընդառաջելու յարգող Կառավարութեան օրոշումին, անգամ մը ևս ապրումամբութեան և անհնազանդութեան մղեցին ժողովուրդին ու Միաբանութիւնը, ինչ որ տագնապը աղէտի վերածեց՝ վտանգելով Ս. Աթոռի վախճան աւանդական առանձնաշնորհումներն և իրաւունքները յաշտ Կառավարութեան, որ արթուն պահակն է Ս. Տեղեաց ծառայող կրօնական Հաստատութիւններուն և հակողը անոնց ներքին կանոնադրութեանց գործադրութեան:

Սոյն հիմնական մեղադրանքներով կ'ամբաստանեմք մեր Միաբանութեան հետեւալ անդամները. —

Գեր. Տ. Տիրան Արքեպ. Ներսիսեան
Գեր. Տ. Շնորհ Եպ. Գալուստեան
Նոգ. Տ. Թարգմ Վրդ. Մանուկեան
Նոգ. Տ. Խանակ Վրդ. Ղազարեան
Նոգ. Տ. Վազգէն Վրդ. Գրգորպեան

Նոյն ամբաստանութիւններով կ'ամբաստանեմք նաև վերոյիշեալներու իրական գործակիցները. —

Գեր. Տ. Զգոն Եպ. Տէր-Յակոբեան
Նոգ. Տ. Տիրայր Վրդ. Տէրվեան
Նոգ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Կրճիկեան
Նոգ. Տ. Հմայեակ Ծ. Վրդ. Ինդրեան

Այսօր տակաւին, վերոյիշեալ ինն Միաբանները կը շարունակեն թերթերով յայտարարութիւններ հրատարակել Յորգանեան արգրակորով Կառավարութեան դէմ, ինչպէս նաև խռովել Հայկական արտասանմանի

բարեացակամ արամադրութիւնները Ս. Աթոռի հանդէպ:

Ս. Աթոռի հանդէպ երկրի իշխանութեանց վատանութիւնը ապահովելու մտահոգութեամբ և ենթականերուն կողմէ Ս. Աթոռին դէմ ներթուրղ դաւաճուն վերջ մը տալու մտադրութեամբ, որպէսզի զրկուին ամէն տեսակի հանգամանքէ Ս. Աթոռի և Միաբանութեան անունով խօսելու, Տնօրէն ժողովուրդատկ. Ընդհ. ժողովի հաւանութեան կ'ենթարկէ վերոյիշեալ Միաբանները Միաբանութեան շարքերէն արտաքսելու իր առաջարկը:

Ասոնց վրայ պէտք է ունեցնել, այլապէս իրենց Միաբանական պարտաւորութիւնները չյարգող երկու Միաբաններ ևս, մին Հոգ. Տ. Ատոմ Վրդ. Առաքելեան, որ երեսուն տարիներէ ի վեր հեռացած է Ս. Աթոռէն, առանց սեւէ ձեռք պահելու իր յարաբարութիւնը Միաբանութեան հետ, և երկրորդ՝ Հոգ. Տ. Սլաւան Արդ. Միւռնեան, որ ուրիշ Միաբանութեան յարած ըլլալուն համար, դադարած պէտք է նկատուի մեր Միաբանութեան անգամակցութենէն:

Ներկայացնելով վերոյիշեալներու պարագան Ձեզր Սրբապետութեան և Ձեր միջոցաւ Պատկ. Միաբանական Ընդհ. ժողովոյ նկատաւման,

Մնամք ի համոզոյր

Ս. Աշոյն Ձեզր Սրբապետութեան

Դիւան Պատ. Տնօրէն ժողովոյ

Ատենադպիր Բ. Ատենապետ

Գևորգ Արք. Ս. Արք. Ս. Արք. Ս. Արք. Ս.

Յ. Գ. Տնօրէն ժողովուրդատկ. յարմար կը նկատէ իշխանութեան իւր վերոյիշեալ Միաբանները եթէ զգաստացած ընդունին իրենց յանցանքները, կրնան դիմել Ս. Աթոռոյ Պատ. Տնօրէն ժողովին, վերստին ընդունուելու համար Միաբանութեան մէջ:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՅՈՒ ՍՐԲՈՅ ԶԱԿՈՎԵԱՆՅ
ՅԵՐՈՒՍԱԼԷՄ

6 Յունիս 1960

Համար 354

Գերաշնորհ

Տ. Եղիշէ Ս. Եպ. Տէրաւերան
Բարեխնամ Պատրիարքական Տեղապահ
Առաք. Ս. Աթոռոյ և Նախագահ Պատ.
Տնօրէն ժողովոյ, Ս. Աթոռ

Սրբազան Հայր,

Պատկառելի Միաբանական Ընդհանուր ժողովը իր 6 Յունիս 1960 թ. Նիստին մէջ, գոտարուած ի Պատրիարքարան առաւօտեան ժամը 10ին, օրակարգ ունենալով Պատ. Տնօրէն ժողովոյ պատահաբանեալ առաջարկը, Միաբանութենէն վտարելու այն Միաբանները

որոնք նախընթաց չորս տարիներու ընթացքին, հակառակ Ս. Աթոռոյ կանոնադրի տրամադրութիւններուն և վաւերաց կարգուսարքին, ստեղծեցին Հայոց Պատրիարքարանի տապանաք՝ թէ Յորդանանէն ներս և թէ դուրս՝ մեր գաղութներուն մէջ։ —

Պատ. Միւր. Ընդհ. ժողովրդ յետ երկար քննութեան, մեծամասնութեամբ որոշեց որ հետեւեալ Միաբաններ՝

1. Տիրան Արեպա, Ներսիսեան
2. Շնորհ Եպս. Գալուստեան
3. Զգոն Եպս. Տէր-Յակոբեան
4. Տիրայր Վրդ. Տէրվիւեան
5. Միւռոն Ծ. Վրդ. Կրնիկեան
6. Հմայեակ Ծ. Վրդ. Խոյնդեան
7. Թորգոմ Վրդ. Մանուկեան
8. Խաճակ Վրդ. Ղազարեան

Ս. ԱԹՈՌ, ԵՐՈՒՍԱԳԼՄ

Գերաշնորհ և Հոգեշնորհ եղբայրներ,

- Տ. Տիրան Արեպա, Ներսիսեան
Տ. Շնորհ Եպս. Գալուստեան
Տ. Զգոն Եպս. Տէր-Յակոբեան
Տ. Տիրայր Վրդ. Տիրվիւեան
Տ. Միւռոն Ծ. Վրդ. Կրնիկեան

- Տ. Հմայեակ Ծ. Վրդ. Խոյնդեան
Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան
Տ. Խաճակ Վրդ. Ղազարեան
Տ. Վազգէն Վրդ. Գրպրըլեան
Տ. Ասոմ Վրդ. Առաքելեան

Տ. Օսական Արդ. Միմասեան

Համաձայն Ս. Աթոռոյ Պատուարժան Տնօրէն ժողովոյ 4 Յունիս 1960 թուակիր պատճառաբանեալ առաջարկին, զՁեզ բոլորդ Ս. Ուխտիս Միաբանութենէն արտաքսելու, Պատկ. Միաբանական Ընդհ. ժողովը ունկնդրեց տեղեկագրի մէջ Ձեր մասին նշած ամբաստանութիւնները, և յետ թեր ու դէմ կարծեաց փոխանակութեան, բացարձակ մեծամասնութեամբ որոշեց արտաքսել զՁեզ բոլորդ Ս. Յակոբեանց Ուխտի Միաբանութենէն։

Ս. Աթոռոյ պաշտօնաթերթ Սիւն-ի միջոցաւ պաշտօնապէս կը հաղորդենք Ձեզի բոլորիդ, Ս. Ուխտիս Միաբանական Ընդհ. ժողովոյ այս որոշումը և կը ծանուցանենք Ձեզի թէ արտաքսուած էք Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամակցութենէն և դադրած, ներկայ տարւոյս 6 Յունիսէն սկսեալ, իրաւական ունէ կապ ունենալէ Միաբանութեանս և Պատրիարքարանիս հետ։

Պատ. Տնօրէն ժողովոյ, Ձեզ Միաբանութենէն արտաքսելու, Միաբանական Ընդհ. ժողովին բերուած պատճառաբանեալ առաջարկին մէջ, փաստօրէն նշուած ու յայտնուած են Ձեր զխաւոր յանցանքները, որոնց համար տրուած այս պատէժը մեղմադոյն կը նկատենք։ Իսկ եթէ զզաստացած, ներողութիւն խնդրէք Վանքի իշխանութենէն և վերստին ընդունուելու դիմում կատարէք, նկատի կ'առնենք Ձեր խնդրանքները, եթէ համոզուինք անոնց անկեղծութեանը։

Ս. Աթոռ, 6 Յունիս 1960

Տէր ընդ Ձեզ
Եղիշէ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
ԸՏՏԻՎԱԼ Պատրիարք Ս. Երուսաղէմի